№ 170 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12 — 1900 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12 № 170

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր կենտրոնները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Առիթը չը փախցնենք. Օպէրային ներկայացումները. Նամակ Սօչիից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Միջազգային կոնգրէսները Պարիզում։

ՄԵՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Այն գործունէութիւնը, որ ցոյց են տալիս մեր քաղաքները, չափազանց աննշան է, համեմատած այն միջոցների հետ, որ նրանք ունեն։ Մեր քաղաքների մէջ են ժողովված մեր երկրի մտաւոր ոյժերը և հարուստ անձնաւորութիւնները։ Այդտեղ են գտնվում մեր բժիշկները, իրաւաբանները, տեխնիկները, մամուլի ներկայացուցիչներ, գործարանատէրերը, խոշոր առևտրական տները և բոլոր այն անձինք, որոնք մշակում և քննում են զանազան արդիւնագործական և հասարակական խնդիրներ։ Այդ ոյժերի միահամուռ գործակցութեամբ կարելի էր առաջացնել մի շարք ձեռնարկութիւններ, թէ քաղաքների բարեկարգութեան և թէ կրթական առաջադիմութեան համար։

Այդ կողմից շատ աչքի ընկնող դեր են կատարում արտասահմանեան քաղաքները, որոնց մէջ մանաւանդ նշանաւոր են անգլիականները։ Մի քանի ձեռնարկութիւններ այնքան գեղեցիկ և լայն իրագործութիւն են ստանում, որ օգուտ են բերում ոչ միայն այն քաղաքին, ուր նրանք գոյութիւն ունեն, այլ եւ շրջակայ տեղերին և ամբողջ երկրին։ Քաղաքները աշխատում են իրանց միջոցներով ջուր և էլեքտրական լոյս հայթհայթել, արագ հաղորդակցութիւն մտցնել, թանգարաններ և փորձնական կայարաններ հիմնել, աշխատողների համար յարմար բնակարաններ շինել, էժան կրեդիտ սահմանել, զանազան տեսակ հիւանդանոցներ, ապաստարաններ բանալ և այլն։ Անգլիական քաղաքների ծախսած գումարների ընդհանուր համակշիռը հասնում է մի անհաւատալի մեծ թուի, այն է մօտ երկու միլիարդ ռուբլու։

Մեր մէջ ինքնագործութեան ոգին շատ է թոյլ եւ երկչոտ։ Մինչդեռ նա կարող էր լայն գործունէութիւն ցոյց տալ, որովհետև նրա առաջն է այն հարուստ և բազմատեսակ փորձը, որ ունեն քաղաքակրթված երկիրների քաղաքները։ Պէտք է միայն անկեղծ ցանկութիւն ունենալ օգտաւէտ գործեր անելու և եռանդով ձեռնարկել նրանց իրագործութեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ամբարտաւանութեան չար ոգին, ինչպէս երեւում է, վճռել է վերջնականապէս խայտառակել ժամանակակից հային։ Այդ է պատճառը, որ մեզանում ոչ ոք չէ ընդունում թէ բնութիւնը կարող է իր համար ջնորհքի եւ ընդունակութեան աւելի համեստ, աւելի ստորին աստիճան ստեղծել, քան ինքն է կարծում, եւ թէ այդ աստիճանի վրա էլ պիտի մնայ ինքը առանց դժգոհութիւն յայտնելու իրաւունքի, ինչպէս չէ կարելի դժգոհ լինել որ մէկը տգեղ է, միւսը գեղեցիկ։ Այդ է պատճառը, որ միջակութիւններով այնքան հարուստ լինելով, մենք լսում ենք, որ, ընդհակառակն, իւրաքանչիւր հայ մի մեծութիւն է, մի հանճար։ Բաւական է, եթէ մի հայ փոքր ի շատէ աչքի ընկնող ընդունակութիւն ցոյց տայ որ եւ է գործի մէջ —եւ ահա նա բարձր է թռչում, նա կարծում է, որ եթէ իրան աջողվում է լաւ կաւէ ամաններ պատրաստել, դա չէ նշանակում թէ նա մի ընդունակ բրուտ է, այլ այն, որ նա կարող է Նիւտոնի կողքին բազմել եւ նոյն իսկ չը հաւանել նրան։ Զուտենք մենք միջակ գրող, միջակ գործիչ. ամեն ինչ խոշոր է մեր մէջ, ամեն ինչ ուռած, փքված։ Ահա, օրինակ, մի նմուշ։ Կ. Պոլսում մի ժամանակ ոտանաւորներ եւ ճառեր էր գրում պ. Արշակ Զօպանեան եւ նրան հաւանում էին. դա արդէն բաւական էր, որ այդ «մօդեռն» հայը սկսէ ճառել եւ գիտութեան ու գիտնականութեան մասին, ճառել այնպիսի բաների վրա, որոնք իր հասկացողութեան անմատչելի են։ Անցեալ տարի կարելի էր կատարելապէս ապշել, տեսնելով պ. Զօպանեանի «Անահիտի» մէջ մի այսպիսի գոհար. խօսելով ոճի պարզութեան եւ գեղեցկութեան մասին, պ. Զօպանեան առանց այլեւայլութեան հաւատացնում էր, որ Տուրգենեվի ոճը ծանր եւ անհասկանալի է։ Պարոնը, ի հարկէ, երազում էլ չէ տեսել Տուրգենեվի ոճը. բայց ինչպէս չը խօսել այդքան հեղինակաւոր կերպով մի բոլորովին անծանօթ իրի մասին, երբ պէտք է ցոյց տալ թէ Զօպանեան աշխարհի բոլոր, բոլոր գործերին ծանօթ է։ Հոգ չէ որ այդ տգիտութիւնը միայն ծիծաղ պատճառեց Տուրգենեվին ճանաչողներին։ Պ. Զօպանեանին հարկաւոր էր գոնէ մի տարի այդպէս որոտալ, որպէս զի կարողանար իր «ասը» էյֆէլեան աշտարակի բարձրութեան հասցնել եւ դառնալ մի վիթխարի հեղինակութիւն, որի առաջ պիտի ծունր դնեն արեւելքն ու արեւմուտքը, հիւսիսն ու հարաւը։ Եւ իրաւ, կարող էք երեւակայել թէ ինչ մեծութիւն է Զօպանեան նոյն իսկ այնպիսի հարցերի մէջ, որոնք Կ. Պոլսի կենտրոնական դպրոցի նախկին աշակերտի համար առնուազն անհասանելի պիտի լինեն։ Ահա «Անահիտի» վերջին համարում (ապրիլ, մայիս, յունիս ամիսների համար պ. Զօպանեան տուել է իր ընթերցողներին ընդամենը 32 երես) նա գովում է ուսանող Մանուէլեանին եւ նկարիչ Շահինին։ Պօլսական ճառաժողովութիւնը՝ միացած պարիզեան բէկլամոլութեան հետ՝ դրել է պ. Զօպանեանի բերանում այն խօսքերը թէ պ. Մանուէլեան պիտի Կլօդ Բէրնար ու Բէրտըլօ դառնայ։ Պարիզի բուլվարներից բուրող այս հոսոսութիւնը չը կարծէք թէ մի միամիտ հաճոյախօսութիւն է՝ ընկերին նուիրած։ Պ. Զօպանեան այնպիսի «մօդեռն» հայերից չէ, որ ժառանայ իր անձը իր ընկերի համար։ Կլօդ Բէրնարի բարձրութեան պ. Մանուէլեան հազիւ թէ երբ եւ իցէ հասնէր, եթէ բարեբախտութիւն չունենար Կ. Պոլսի կենտրոնական դպրոցում պ. Զօպանեանից ճանաչված լինել։ Նախ եւ առաջ այդ կենտրոնական դպրոցը.

Զանազան անկիւններէ եկած խումբ մը հայ տղաք, մտաւորական գերազնիւ խանդավառութեամբ մը բորբոքած, իրարու խօսք տուին «բան մը ըլլալ» ոչ միայն մեր ազգային խնարհ շրջանակին, այլ նոյն իսկ աւելի բարձր շրջանակներու մէջ։

Եւ ճիշդ որ այդպէս էլ եղել է։ Գոնէ պ. Զօպանեան արդէն կարողացել է «բան մը ըլլալ» աւելի բարձր շրջանների մէջ, այն էլ շատ մեծ բան։ Այլապէս նա, ի հարկէ, չէր կարող իր ընկեր Մանուէլեանի մէջ տեսնել ապագայ Կլօդ-Բէրնար եւ Բէրտըլօ։ Դեռ այն ժամանակ պ. Զօպանեան վստահ էր հայկական Կլօդ-Բէրնարի վրա.

Ես վստահ էի, որ եթէ յաջողէր իր բաղձանքն իրագործել, արդիւնքը զոր ձեռք պիտի ձգէր՝ այս ինչ հիւանդութեան տեղը գտնելու կամ այն ինչ գործիքին կատարելագործումը դիւրացնելու մէջ պիտի չը կայանար, այլ գտնելու մէջ դեռ չը նշմարված մանրամասնութեանց շարք մը որմէ կեանքի գերագոյն խորհուրդներուն մեկնումը լուսաւորող տեսութիւններ բղխէին։ Եւ Մանուէլեան իրականացուց յոյսը զոր իր վրա դրած էի։

Եւ փառք Աստուծոյ, որ պ. Մանուէլեան իրականացրել է պ. Զօպանեանի յոյսը։ Գոնէ միանգամայն ապահով կարող ենք լինել, որ պ. Մանուէլեան անպատճառ Կլօդ-Բէրնար կը լինի. եթէ պ. Զօպանեան այդ տեսակ մի փայլուն ապագայ է գուշակել երիտասարդ ուսանողի համար, ինչ կասկած կարող է լինել, որ նա ինքը Կլօդ Բէրնարներից ու Բէրտըլօներից էլ բարձր է։ Այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է. փոքրիկ, հասարակ մահկանացուն չէ կարող այդպիսի գուշակութիւն անել եւ մանաւանդ չի յանդգնի հրապարակով ասել թէ Կլօդ Բէրնարը արդարացրեց իր յոյսը։

Այս այսպէս լինելուց յետոյ, պ. Զօպանեան, ի հարկէ, չէր բարեհաճի «Մշակի» երկու աշխատակիցների մասին ուրիշ բան ասել, բացի նրանից, որ այդ երկուսն էլ տգէտ են ու անհասկացող։ Հայ դէկադէնտութեան ներկայացուցիչը ասում է, որ եթէ այդ աշխատակիցների անունը յիշում է, պատճառն այն է, որ ուզում է «Մշակին» խրատել, որ նա չը տպագրէ այնպիսի բաներ, որոնց մէջ երեւան է գալիս պ. Զօպանեանի հոսոսութիւնը։ Մենք միայն ծիծաղել կարող ենք Կլօդ-Բէրնարների եւ Բէրտըլօների բարձր հովանաւորի այս տեսակ «ձափրտուքի» վրա։ Պ. Զօպանեանին խորհուրդ ենք տալիս, քանի ուշ չէ, մի քիչ փոքրանալ, մտնել սեփական կճեպի մէջ. այն ժամանակ գուցէ նա հասկանայ, որ «Անահիտի» վրա տպագրված է թէ այդ ամսագիրը մեզ, ռուսահայերիս համար, պիտի ունենայ «զուտ գրական եւ գեղարուեստական պարունակութիւն մը» եւ սակայն մենք նրա մէջ ոչինչ չենք գտնում, բացի պ. Զօպանեանի ազգասիրաբար վայելած ճաշերի հաշիւներից։ Առաջին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍՆԵՐԸ ՊԱՐԻԶՈՒՄ

Խաղաղութեան և իրաւաբարութեան միջապարլամէնտական կոնգրէս

Ահա դարձեալ մի կոնգրէս, որ ամբողջ հինգ օր ոչ միայն ամբողջ Պարիզի, այլ եւ բովանդակ Եւրոպայի ուշադրութիւնը գրաւեց։ Հաագայի նշանաւոր դեսպանախորհրդից յետոյ, երբ այնքան անակնկալ կերպով ոտնակոխ եղան միջազգային իրաւունքները, երբ Անգլիան եղծեց մի ձեռքով այն, ինչ որ ստորագրել էր միւս ձեռքով, շատերը անհամբեր սպասում էին ներկայ կոնգրէսին, որը, սակայն, իր տեսակի մէջ, թւով տասներորդն է։ Ներկայ կոնգրէսը կոչվում է միջապարլամէնտական, որովհետեւ նրան մասնակցում են բոլոր պարլամէնտական երկիրները, ի դէմս պատգամաւորների. այդ պատգամաւորների թւում կային եւ այնպիսիները, որոնք մասնակցել են Հաագայի կոնֆերէնցիային։

Կոնֆերէնցիայի պաշտօնական բացումից մի օր առաջ յայտնվեց, որ կոնգրէսի ղեկավար խորհուրդը կամ յանձնաժողովը ստացել է մի նամակ պ. Վէսսէլից, Օրանժեան հանրապետութեան պարլամէնտի նախագահից եւ բօէրների կողմից եկած պատգամաւորներից, որով նրանք խնդրում են ընդունել իրանց իբրեւ կոնգրէսի անդամ եւ ներկայացնում են մի յիշատակագիր՝ կոնգրէսի քննութեան ենթարկելու։

Կոնգրէսի կանոնների համաձայն, ամեն մի առաջարկութիւն կամ ներկայացրած յիշատակագիր նախապէս քննվում է ղեկավար կամ կարգադրիչ յանձնաժողովի կողմից եւ կամ ընդունվում է կոնգրէսի քննութեան ենթարկելու, կամ մերժվում է։ Արդ, ստանալով հարաւաֆրիկեան միացեալ հանրապետութեան ներկայացուցիչների այդ յայտարարութիւնը, միւս կողմից ստանալով կոնգրէսի անգլիական անդամների բողոքը, որով նրանք յայտնում են, թէ ստիպված կը լինեն խմբովին հրաժարվել կոնգրէսին մասնակցելուց, եթէ ընթացք տրվի բօէրների պատգամաւորների պահանջին,— կարգադրիչ յանձնաժողովը որոշել էր. 1) ընդունել պ. Վէսսէլին կոնգրէսի նիստերին իբրեւ Օրանժեան հանրապետութեան պարլամէնտի անդամի, բայց առանց որ նրա այդ մասնակցութիւնը որ եւ է դնահատութիւն առաջ բերի իրողութեան եւ իրաւունքի այն վիճակի մասին, որի մէջ գտնվում է այժմ իր երկիրը. 2) բօէրների պատգամաւորների յիշատակագիրը, կոնգրէսի օրակարգի մէջ անցրած չը լինելով (օրակարգը որոշվում է առաջուց), չէ կարող առաջարկվել կոնգրէսի քննութեան. նա միայն կը բաժանվի անհատապէս կոնգրէսի բոլոր անդամներին։

Այս վճիռը, գուցէ եւ համաձայն կոնգրէսի կանոնադրութեան, յարուցեց սաստիկ յուզումն եւ զայրոյթ Պարիզում եւ կոնգրէսի այն բազմաթիւ անդամների մէջ, որոնք հաւակրող լինելով բօէրների դատին, կարծում էին, թէ, վերջապէս, կը լինի մի ատեան եւ դատաստան, ուր կարելի է պաշտպանել թշուառ բօէրներին անգլիական հարստահարութեան դէմ։ Ոչ ոք չէ ուզում լսել բօէրների պատգամաւորներին, չէզոքութիւն պահպանելով. խաղաղութեան կոնգրէսն է միակ յոյսը, նա էլ մերժում է։

Այստեղ քաղուածօրէն առաջ բերենք բօէրների ներկայացրած յիշատակագիրը։ Պատգամաւորներ Ֆիշէր, Վէսսէլ եւ Վօլմարան, բացատրելով, թէ ինչպէս իրանց ցեղը կողոպտվել, հալածվել, անարդար յարձակման է ենթարկվել ագահ մարդկանց կողմից, որոնք եկել են հեռաւոր կողմերից բազմաթիւ, մեծ պահանջներով եւ որոնք այն արդարացումն ունեն, թէ ոյժը ջնջում է իրաւունքը, գալիս են հետեւեալ եզրակացութիւններին, ուղղելով խօսքը կոնգրէսիստներին։

«Մենք դիմում ենք ձեր կոնգրէսին, որ բաղկացած է աշխարհի կազմակերպված բոլոր պետութիւնների ամենալուսաւոր մարդկանցից, և մենք ասում ենք «ամենալուսաւորված», որովհետև դուք ամենքդ, որ այստեղ էք, ձգտում էք վերջ դնել այն բարբարոսութեան, որ կոչվում է ոյժ, պատերազմ, որովհետև դուք նուիրում էք ձեր բոլոր ջանքերը՝ ընդունել տալու այն սկզբունքը, թէ ազգերի, ինչպէս և քաղաքակրթված մարդկանց մէջ, վէճերը կարող են լուծվել արդարադատութեան և արդարութեան սկզբունքներով։

«Մենք համոզված ենք, որ եթէ դուք պաշտպանէք մեր դատը, եթէ դուք յայտարարէք, թէ հարաւային աֆրիկեան պատերազմը raison d'être չունի, ուստի և պէտք է վերջանայ, թէ անգլիացիները և բօէրները պէտք է ցած դնեն իրանց զէնքերը, թէ փոխադարձ պահանջները և վէճերը պէտք է լուծվեն իրաւարար դատարանով, մենք համոզված ենք, որ ոչ միայն հարաւ-աֆրիկեան պատերազմը կը վերջանայ, այլ եւ դուք կը կատարէք մի գործ, որ կանմահացնի յաւիտեան միջապարլամէնտական միութեան հաստատութիւնը»։

Կոնգրէսը չը կամեցաւ կամ անզօր եղաւ կատարել այդ անմահ գործը, թէեւ հակառակ կարգադրիչ յանձնաժողովի եւ ֆրանսիական կաբինէտի ջանքերին, բօէրների անկեղծ եւ բազմաթիւ բարեկամները կարողացան կոնգրէսի քննութեան ենթարկել յիշատակագիրը, ինչպէս յետոյ կը տեսնենք։ Զենք կարող չը յիշատակել մի յանդիմանութիւն, որ բօէրների պատգամաւորները արին ֆրանսիացիներին. մի լրագրի թղթակից, դիմելով այդ պատգամաւորներին, հարցրեց, գոհ են Ֆրանսիայում գտած ընդունելութիւնից եւ համակրական ցոյցերից, իսկ այդ ընդունելութիւնը, պէտք է ասել, փառաւոր էր եղել։ Պատգամաւորները պատասխանում են. «Ամբոխի աղաղակները, փողոցային ցոյցերը՝ մեծ բան չեն նշանակում. մենք պէտք չունենք ցնծութեան աղաղակների, այլ գործողութեան։ Բոլոր ազգերը համակրութիւն են արտայայտում մեզ. լաւ, ուրեմն մենք խնդրում ենք այդ ազգերից, մենք խընդրում ենք Ֆրանսիացիներից, ամբողջ Ֆրանսիայից՝ հարկադրել օրինական, սահմանադրական, քաղաքացիական ճանապարհով իրանց կառավարութիւններին միջնորդել ի նպաստ մեր. ուրիշ բան չենք պահանջում»։

Բայց անցնենք կոնգրէսի օրակարգին։

Կոնգրէսի նախագահն է Ֆրանսիական սենատի նախագահ Ֆալիէր։ Նիստերը կայանում են սենատում։

անդամն ենք լսում, որ տասնութ հոգով ճաշեն էլ կարող է լինել մի գրական կամ գեղարուեստական երեւոյթ. Պարիզի պէս մի քաղաքում հայերէն տպարան են հիմնել—ինչո՞ւ համար, որպէս զի հռչակեն թէ պ. Զօպանեան լաւ թատրոնական գինու բաժակի ետեւից Կլոդ-Բէրնարներ երազել հայերի մէջ։

Ողորմելի «մօդեռն» հայութիւն...

ԱՌԻԹԸ ԶԸ ՓԱԽՑՆԵՆՔ

(Վերջ)

Մեր նահանգի դաշտային մասերում, ուր օդը տաք եւ ջուրը առատ է, աշակվում է բամբակ, իսկ թթենիների շնորհիւ բժժ. լեռնային մասերում, շնորհիւ գեղեցիկ արօտատեղիների, ստացվում է բուրդ, իսկ սարահարթերում թէպէտ մշակում են կտաւահատ եւ կանեփ, բայց առաջինը միայն ձէթի համար, իսկ երկրորդը հատիկների, այնպէս որ ցողունները ոչ մի բանի չեն ծառայում. մինչդեռ այդ երկու բոյսերից կարելի էր արդիւնաբերել վուշ քաթանների եւ պարուսինների համար եւ կանեփ—թոկերի (պարան) եւ զանազան թելերի համար։ Կտաւահատ եւ կանեփ մշակող մեր գիւղական ժողովուրդը գաղափար անգամ չունի վուշի մշակութեան մասին. իսկ կանեփից շատ քչերը միայն պատրաստում են կոպիտ ու անհարթ կապեր կենդանիների համար։ Ռուսաստանում, որքան մենք գիտենք, Կուրսկ նահանգը մշակում է կանեփ եւ արդիւնաբերում մեծ քանակութեամբ թոկեր եւ թելեր։ Իսկ Եարօսլավլի նահանգը յայտնի է վուշի ծաղկած մշակութեամբ եւ իր ընտիր քաթաններով։

Եթէ ռուս գիւղացին ոչ միայն պարուսիններ եւ քաթանի կոպիտը, այլ եւ ամենանուրբ տեսակը գործում է իր աղքատ յարկի տակ—արդեօք չէր կարելի նոյնը ծաղկեցնել տալ մեր երկրում։ Արդեօք կտաւահատի եւ կանեփի մշակութիւնը ունենալով, չէր կարելի մեր ժողովրդի մէջ մտցնել նաեւ վուշի ու կանեփի մշակութիւնը։

Ի հարկէ կարելի էր, եթէ միայն այդ երկու բոյսերը ուսումնասիրվէին տեղուտեղը եւ ձեռնհաս մարդկանց միջոցով տարածվէին մեր երկրի մէջ։

Այսպէս ուրեմն հում բերքերը միմիայն մշակելը դեռ բաւական չէ մանուածագործութիւնը սկսելու համար, այլ հում բերքին պէտք է տալ որոշ կերպարանք։ Այսօր Երեւանը արդիւնաբերում է բամբակ, բայց շնորհիւ այն հանգամանքի, որ մաքրելու եւ ամեն տեսակի թելեր պատրաստելու մեքենաներ չը կան, բամբակի գործուածքներ բոլորովին մուտք չեն գործել մանուածագործութեան մէջ, այլ ընդհակառակը եղածն էլ մոռացվել է, մինչդեռ Ռուսաստանի մի քանի տեղերը—Սարատովը սարպինկաների գործուածքներով, գլխաւորապէս Մօսկվան շնորհիւ իր թելեր պատրաստող մեքենաների—տալիս են իրանց շրջակայ ժողովրդին պատրաստի թել, հետեւապէս գործ, աշխատանք։ Մուժիկը այդ պատրաստի թելից ձեռագործում է միտկալներ, երեսսրբիչներ, պատրաստի վերմակներ. մետաքսի թելից գործում է կանաուսներ, բուրսօներ, ֆուլեարներ եւ հազար մի բաներ։ Մօսկվայում կան բազմաթիւ մարդիկ, որոնք գործ սկսելով մի գիւղի հետ, վերցնում են թելը եւ կշռով տալիս գիւղացիներին՝ ազդեցութիւն ունեցողներից մէկի միջոցով եւ գործուածքը ընդունում նոյնպէս կշռքով՝ այնպէս որ մի մարդ, շնորհիւ իր փոքրիկ խանութի, գործ է տալիս մի ամբողջ գիւղի եւ ինքն էլ փառաւոր վաստակներ ստանում, (թէպէտ այն էլ պէտք է ասել, որ այդ փոխանակութիւնը դարձել է հարստահարութեան մի մեծ աղբիւր, որովհետեւ մուժիկի աշխատանքի վարձը այդ գործ առողները հասցրել են գրօշների)։

Ուսումնասիրել Ռուսաստանում վուշի եւ կանեփի մշակութիւնը, մտնել ռուս գիւղը եւ սովորել մուժիկից նրա մանուածագործութիւնը եւ թելեր պատրաստելու մի երկու մեքենաներ ձեռք բերելով դառնալ Կովկաս եւ տարածել մանուածագործութիւնը,—այս ծրագիրը ունէին Մօսկվայում մի քանի երիտասարդներ։ Այդ գեղեցիկ միտքը անկատար մնաց։ Սակայն եթէ մի քանի երիտասարդներ դրամ չունենալու պատճառով չը կարողացան այդ իրագործել—մթէ այդ չէր կարող անել մեր Գիւղատնտեսական ընկերութիւնը, որը ունի եւ միջոց եւ բոլոր յարմարութիւնները։

Վերջին տարիներս պետական կալուածքների եւ երկրագործութեան մինիստրութեան հսկողութեան տակ Անդրկովկասի մի քանի տեղերում հիմնվել են փորձնական ագարակներ, որոնք իրանց զրոյցներով եւ փորձերով բաւական նպաստում են գիւղատնտեսական նոր սիստեմների տարածման (մի այդպիսի ագարակ գոյութիւն ունի, օրինակ, Երեւանում)։ Մթէ չէր կարելի անել նոյնը մանուածագործութիւնը զարգացնելու նպատակով, հիմնելով համապատասխան արհեստանոց։ Ահա այսպիսի խնդիրների վրա ենք դարձնում Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ուշադրութիւնը, որը, որպէս ձեռնհաս մարմին, եկող 1901 թուին Թիֆլիսում բացվելիք Կովկասեան ցուցահանդէսում կարող էր ի ցոյց դնել հարկաւոր պարագաներ, կազմակերպել զրոյցներ վուշի եւ կանեփի մշակութեան եւ մանուածագործութեան վերաբերեալ, ի հարկէ այժմից ուղարկելով մարդիկ այդ ճիւղերը ուսումնասիրելու համար եւ որ գլխաւորն է բերել տալով մի քանի պարզ մեքենաներ—թելեր պատրաստելու համար։ Մենք համոզված ենք, որ այդպիսի մի ձեռնարկութիւն իր բուն նպատակին—մանուածագործութեան ծառայելուց զատ, մի կարճ ժամանակից յետոյ նոյն իսկ վաստակ կը բերէր թելի վաճառքով։

Եթէ Գիւղատնտեսական ընկերութեան ուժերից վեր է այնպիսի ձեռնարկութիւններ, ինչպիսին է մեր երկրի անջրդի տեղերի ոռոգումը արհեստական ջրանցքների միջոցով, կարծում ենք նրա ուժերից վեր չեն այնպիսի թեթեւ ձեռնարկութիւններ, ինչպիսին մենք մատնացոյց արեցինք։

Վերջաբանում ուրախութեամբ արձանագրում ենք լուսաւորութեան մինիստրութեան որոշումը, աջակցել քաղաքներին բանալու արդիւնագործական դպրոցներ, որի համար նա դիմել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին՝ խնդրելով տեղեկութիւն տալ, թէ որտեղ ինչ տեսակ դպրոցների կարիք կայ։ Ահա այս բանի վրա դարձնելով Կովկասի քաղաքների, մասնաւորապէս Երեւանի, ուշադրութիւնը, մատնացոյց ենք լինում առանձնապէս այն հանգամանքի վրա, որ դպրոցները կարող են լինել բոլորովին տարբեր ծրագրով, համաձայն տեղական պահանջներին, ուրեմն թող օգտվեն այժմեան տրամադրութիւնից։ Ի հարկէ այս դէպքում էլ որոշ դեր ունի կատարելու Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը։

Յով. Տէր-Մարտիրոսեանց

Երեւան

ՕՊԷՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Կիրակի օր, ամսոյս 10-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում կայացաւ օպէրային արտիստների առաջին ներկայացումը։ Ինչպէս ամեն տարի, այս անգամ էլ սեզօնը բացվեց «Жизнь за Царя» օպէրայով։ Ներկայացումից առաջ ամբողջ խմբով եւ օրկէստրով կատարվեց ռուսայ ազգային օրհներգը։ Թատրօնը լի էր հասարակութեամբ։

Ներկայացումն անցաւ, ինչպէս եւ միշտ, բաւական սահուն. թէ անսամբլը, թէ սոլօները, թէ խումբը եւ թէ օրկէստրը շատ բարեխղճաբար կատարեցին իրանց ստանձնած թէ պատասխանատու եւ թէ երկրորդական դերերը։

Առաջին, սեզօնի բացման ներկայացումը միշտ համարվում է իբրեւ հանդիսային։ Դրա համար առանձին ոյժերի մասին ոչինչ չենք կարող ասել, մանաւանդ որ պիէսան էլ այնպիսի մի օպէրա է, որի մէջ արտիստները մի առանձին ոյժ չեն էլ կարող ցոյց տալ։ Առ այժմ այսքան կարելի է ասել, որ նոր հրաւիրված արտիստներից բասս Սերեբրեակովի ձայնը, երգելու չկօլան եւ խաղը բաւական գրաւիչ էին երեւում։ Տէնօր Բորիսենկօ մեր հասարակութեան յայտնի է անցեալ տարվանից։ Նրանում ոչ մի փոփոխութիւն չէ երեւում։ Խումբն այս տարի աւելի բազմամարդ է երեւում, որ շատ կը նպաստէ ընդհանուր աջողութեան։ Օրկէստրը լաւ էր նուագում Պագանիի ղեկավարութեամբ։ Դէկօրացիաները գեղեցիկ էին,

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ՍՕՉԻԻՑ

Օգոստոսի 21-ին

Մեր քաղաքից 12 վերստ հերաւորութեան վրա գտնվում է մի ծծմբային աղբիւր, որը թէեւ դեռ լուրջ հետազօտութեան ենթարկված չէ, բայց երեւում է որ անօգուտ ջուր չէ եւ գուցէ ապագայում բուժարաններից մինը համարվի։ Մի երկու հիւանդի օգտվելը մեծ ժողովրդականութիւն տուեց այդ աղբիւրին եւ ուխտաւորների թիւը քանի գնում աւելանում է։ Փոթիից, Սուխումից, Նովիյ-Աֆոն գիւղերից եւ այլն գալիս են հայեր, յոյներ, վրացիներ, 5—6 օր լողանում եւ յետ են դառնում։

Վատը այն, է որ բնակարանի չը գոյութեան պատճառով շատերը բացօդեայ են քնում եւ փոխանակ օգտվելու՝ վնասվում են. մի քանիսն էլ անխոհեմաբար մտնում են գաղերով լի փոքրիկ այրի մէջ եւ խեղդվում են։

Ամբոխը ոչխարամիտ է. գալիս է վիներական ախտ ունեցողը, գալիս է յօդացաւով տանջվողը, վազում են լուսնոտները, կրծքացաւ ունեցողները եւ կաղերը, եւ ընդամենը 5—6 օր լողանալով հեռանում են. կարծես Պրոպատիկէ աւազանը լինէր. եւ դրա համար քիչ չեն դէպքերը, երբ մի հիւանդի հակառակ գալով հանքային ջուրը, աւելի ծանրանում է հիւանդութիւնը, փոխանակ մէկ ոտի, երկու ոտքով կաղանում է. ճանապարհը լաւ չը լինելու պատճառով ձիուց ընկնողներ, ձեռք ու ոտք կոտրողներ էլ պակաս չեն։ Իսկ ամբոխը ոչխարի նման էլի վազում է, բնաւ չը մտածելով, որ իւրաքանչիւր հանքային ջուր իր առանձին տեսակի օգուտը ունի եւ նրանից կարելի է օգտվել միայն բժշկի ցուցմունքով։

Խորհուրդ կը տայինք գիւղացի եղբայրներին զգուշանալ այդ ջրում լողանալուց եւ միւս կողմից հոգ տանել առողջապահական կանոններին. աւելի լաւ չէր լինի աննդառութեան եւ մաքրութեան խնամքով վերաբերվել, գրաստի նըման առանց դադարի չաշխատեցնել կնոջը եւ վերջ տալ մանկահասակ գազանային ամուսնութիւններին եւ այդպիսով շատ հիւանդութիւնների տեղիք չը տալ, քան առանց արդիւնքի վազել այս ու այն ուխտերը կամ հանքային ջրերը։

Ա. Թովմասեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Օրէնսդրական ժողովածուի» մէջ հրատարակված է կառավարչական մի կարգադրութիւն, որով Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը փակվում է։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան ժամանակաւոր կառավարչի թոյլտուութեամբ՝ Խարկովում հիմնված է մի ընկերութիւն, որի նպատակն է նպաստել կանանց գիւղատնտեսական կրթութեան գործին։ Այդ ընկերութեան գործունէութիւնը սահմանափակվելու է միայն Խարկովի նահանգով։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, հրաժարվելով զեմստվոյի հիմնարկութիւնները արեւմտեան եւ հարաւ-արեւմտեան նահանգներում մտցնելու դիտաւորութիւնից, ձեռնամուխ է լինում վերակազմելու նահանգական եւ գաւառական ներկայացուցիչներ, ինչպիսին մենք մատնացոյց արեցինք։

Վերջաբանում ուրախութեամբ արձանագրում ենք լուսաւորութեան մինիստրութեան որոշումը, աջակցել քաղաքներին բանալու արդիւնագործական դպրոցներ, որի համար նա դիմել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին՝ խնդրելով տեղեկութիւն տալ, թէ որտեղ ինչ տեսակ դպրոցների կարիք կայ։ Ահա այս բանի վրա դարձնելով Կովկասի քաղաքների, մասնաւորապէս Երեւանի, ուշադրութիւնը, մատնացոյց ենք լինում առանձնապէս այն հանգամանքի վրա, որ դպրոցները կարող են լինել բոլորովին տարբեր ծրագրով, համաձայն տեղական պահանջներին, ուրեմն թող օգտվեն այժմեան տրամադրութիւնից։ Ի հարկէ այս դէպքում էլ որոշ դեր ունի կատարելու Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը։

Յով. Տէր-Մարտիրոսեանց

Երեւան

ՆԱՄԱԿ ՍՕՉԻԻՑ

Օգոստոսի 21-ին

Մեր քաղաքից 12 վերստ հերաւորութեան վրա գտնվում է մի ծծմբային աղբիւր, որը թէեւ դեռ լուրջ հետազօտութեան ենթարկված չէ, բայց երեւում է որ անօգուտ ջուր չէ եւ գուցէ ապագայում բուժարաններից մինը համարվի։ Մի երկու հիւանդի օգտվելը մեծ ժողովրդականութիւն տուեց այդ աղբիւրին եւ ուխտաւորների թիւը քանի գնում աւելանում է։ Փոթիից, Սուխումից, Նովիյ-Աֆոն գիւղերից եւ այլն գալիս են հայեր, յոյներ, վրացիներ, 5—6 օր լողանում եւ յետ են դառնում։

Վատը այն, է որ բնակարանի չը գոյութեան պատճառով շատերը բացօդեայ են քնում եւ փոխանակ օգտվելու՝ վնասվում են. մի քանիսն էլ անխոհեմաբար մտնում են գաղերով լի փոքրիկ այրի մէջ եւ խեղդվում են։

Ամբոխը ոչխարամիտ է. գալիս է վիներական ախտ ունեցողը, գալիս է յօդացաւով տանջվողը, վազում են լուսնոտները, կրծքացաւ ունեցողները եւ կաղերը, եւ ընդամենը 5—6 օր լողանալով հեռանում են. կարծես Պրոպատիկէ աւազանը լինէր. եւ դրա համար քիչ չեն դէպքերը, երբ մի հիւանդի հակառակ գալով հանքային ջուրը, աւելի ծանրանում է հիւանդութիւնը, փոխանակ մէկ ոտի, երկու ոտքով կաղանում է. ճանապարհը լաւ չը լինելու պատճառով ձիուց ընկնողներ, ձեռք ու ոտք կոտրողներ էլ պակաս չեն։ Իսկ ամբոխը ոչխարի նման էլի վազում է, բնաւ չը մտածելով, որ իւրաքանչիւր հանքային ջուր իր առանձին տեսակի օգուտը ունի եւ նրանից կարելի է օգտվել միայն բժշկի ցուցմունքով։

Խորհուրդ կը տայինք գիւղացի եղբայրներին զգուշանալ այդ ջրում լողանալուց եւ միւս կողմից հոգ տանել առողջապահական կանոններին. աւելի լաւ չէր լինի աննդառութեան եւ մաքրութեան խնամքով վերաբերվել, գրաստի նըման առանց դադարի չաշխատեցնել կնոջը եւ վերջ տալ մանկահասակ գազանային ամուսնութիւններին եւ այդպիսով շատ հիւանդութիւնների տեղիք չը տալ, քան առանց արդիւնքի վազել այս ու այն ուխտերը կամ հանքային ջրերը։

Ա. Թովմասեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Օրէնսդրական ժողովածուի» մէջ հրատարակված է կառավարչական մի կարգադրութիւն, որով Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը փակվում է։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան ժամանակաւոր կառավարչի թոյլտուութեամբ՝ Խարկովում հիմնված է մի ընկերութիւն, որի նպատակն է նպաստել կանանց գիւղատնտեսական կրթութեան գործին։ Այդ ընկերութեան գործունէութիւնը սահմանափակվելու է միայն Խարկովի նահանգով։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, հրաժարվելով զեմստվոյի հիմնարկութիւնները արեւմտեան եւ հարաւ-արեւմտեան նահանգներում մտցնելու դիտաւորութիւնից, ձեռնամուխ է լինում վերակազմելու նահանգական եւ գաւառական

Օգոստոսի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին, սենատի փառահեղ դահլիճում, որտեղ ասեղ գցելու տեղ չը կայ, բացվում է կոնգրէսի նիստը։ Բարձր արիստոկրատիային պատկանող պճնված եւ քարեղէնների մէջ կորած տիկնայք եւ օրիորդներ բռնել են գրեթէ բոլոր նստարանները, այնպէս որ կոնգրէսիստները ստիպված են ոտքի կանգնել։ Կառավարութեան կողմից ներկայ է միայն արդարադատութեան մինիստրը, կամ, ինչպէս ասում են ֆրանսիացիները, «կնիքների պահապանը» (garde des sceaux), պ. Մոնի։

Նախագահ Ֆալլիէր, յայտարարելով կոնգրէսի նիստը բացված, մի ճառի մէջ նախ ողջունում է օտարերկրեայ հիւրերին։ Նկարագրում է, թէ տասը տարվայ ընթացքում ինչ է կարողացել անել միջապարլամէնտական միութիւնը. իրաւարարութեան (արբիտրաժի) գաղափարը, որ տասը տարի առաջ գրեթէ ցնորք էր համարվում, այժմ սկսում է մարմին ստանալ, սերմն ընկել է պարարտ հողի վրա եւ եթէ հունձը մենք չենք տեսնի, բայց մեր սերունդը անպատճառ կը քաղի։

«Մենք բաւական փորձառութիւն ունենք արդէն, եղբայրներ Ֆալլիէր, որ չը խաբենք մեզ ցնորական երազներով, բայց թող մեր համբերութիւնը չը հատնի։ Կրքերը, նախապաշարումները, ախորժակները, միշտ եւ ամեն տեղ չեն աշխարհի տէրերը։ Կան նրանցից աւելի բարձր, մարդկային խղճմտանքի տիրապետողներ—իրաւունքը, արդարութիւնը, արդարադատութիւնը։

«Դուք խօսքի եւ գրչի մարդիկ էք։ Դուք առաքեալների հաւատն ունէք. առաջ տարէք արիաբար ձեր գործը։ Հասկացրէք ազգերին, որ աւելի պատուաւոր է նրանց համար ծռել իրանց գլուխը իրաւարարական մի պարզ վճռի առաջ, քան որոնել պատերազմի դաշտերում ոյժի արիւնահեղ յաղթութիւնը, եւ դուք կարժանանաք ձեր հայրենիքների եւ մարդկութեան երախտագիտութեան»։

Ամբիոն է բարձրանում արդարադատութեան մինիստր Մոնի եւ ողջունելով ֆրանսիական կառավարութեան կողմից օտար պարլամէնտների անդամներին, ասում է, թէ նրանց աշխատութիւնները այնքան համապատասխանում են Ֆրանսիայի գործերը ղեկավարող մարդկանց ջանքերին, որ միայն ամենաջերմ համակրութիւն կարող են յարուցանել։

Բացման այդ ճառերից յետոյ, կոնգրէսն անցաւ իրակարգին։ Բէլգիական սենատոր Դէշան կարդաց մի զեկուցում «պատերազմի ժամանակ խաղաղութեան իրաւագիտական ըէժիմի մասին»։ Այդ զեկուցումը, պէտք է ասել, թէեւ փիլիսօփայական տեսակէտից շատ օգտակար, բայց շատ քիչ էր համապատասխանում մեր այս աշխարհի մտաղբաղումներին, ուր ոյժի իրաւունքը օրից օր հաստատվում է աւելի սատկութեամբ եւ տոկունութեամբ, այդ պատճառով եւ վիճաբանութիւնները լոկ տեսական էին։ Բարեբաղդաբար, կոմս Ապպօնի, նշանաւոր ունգարական պարլամէնտական գործիչը, ամբիոն բարձրանալով կարդաց իր առաջարկը «միջազգային իրաւարարութեան համար ամուլի միութիւն կազմելու» մասին։

«Այն ծրագիրը, որ առաջարկում եմ ձեզ, ասաց նա, անհրաժեշտ լրացումն է այն մտքի, որ ծնունդ է տուել ձեր միութեան։ Ո՞րն է այդ միտքը.—հասնել խաղաղութեան թագաւորութեան՝ պարլամէնտների մէջ ներկայացուցիչ ունեցող ժողովրդական տարրի գործունէութեամբ։ Ազգերը ոչ մի շահ չունեն պատերազմի մէջ։ բայց ամեն բան կարող են շահել խաղաղութիւնից։ Պատերազմը կարող է ծառայել միայն մի իշխանի, մի մինիստրի կամ մի զինուորական պետի փառասիրութեան. նա կարող է ծառայել մի քանի ղեկավար կամ աղդեցիկ դասակարգերի շահերին, օրինակ, հընտումն, պատժական շրջաններում, ագահ եւ աւարի ծարաւ ազնուականութեան, իսկ այժմ դիվիդէնտների ծարաւ կապիտալիստների շահերին, բայց մի քաղաքակրթված ազգի մասսայի համար պատերազմը միայն պատուհաս է։ Միջապարլամէնտական միութիւնը պէտք է աշխատի այդ պատուհասը վերացնել։

«Բայց ինչ է պատճառը, որ միջապարլամէնտական միութեան ազդեցութիւնը այնքան անշան է. արդեօք պատճառը պարլամէնտական հաստատութիւնների անկումն է։ Ժամանակակից պարլամէնտականութեան հիւանդութիւնը, որ ընդհանուր է բոլոր երկրների համար, առաջ է գալիս այն յայտնի անտարբերութիւնից, որ ժողովուրդները ցոյց են տալիս իրանց պարլամէնտի վերաբերմամբ։ Պարլամէնտական գործունէութիւնը ի նպաստ խաղաղութեան աւելի ազդեցիկ կը լինէր եւ կը ստիպէր կառավարութիւններին խոնարհել, եթէ այդ գործունէութեան նեցուկ կանգնէր ժողովրդական մի զօրեղ կամք. արդ, այդպիսի կամք չը կայ եւ այդ է մեր տկարութեան իսկական պատճառը։ Մենք միայն այն ժամանակ կը խոնարհեցնենք մեզ հասարակական իշխանութիւններին, երբ կը լցնենք այդ պակասը, բայց դրան հասնելու համար՝ պէտք է մի ամբողջ յեղաշրջում առաջ բերել մտքերի մէջ։ Մենք ամենից առաջ տեսնում ենք հայրենասիրութեան մի կոպիտ հակացողութիւն, որ կարծում է, թէ կարելի է զանց անել բարոյականութեան եւ արդարութեան օրէնքները, որ համոզված է, թէ հայրենասիրական պարտականութիւն է՝ պաշտպանել եւ խրախուսել հայրենիքի անունով գործված կամ գործելի բոլոր անարդարութիւնները։ Այդ կոպիտ գաղափարի տեղ պէտք է արծարծել հայրենիքի աւելի ազնիւ եւ աւելի լուսաւոր մի սէր»։

Իր ծրագրով կոմս Ապպօնի առաջարկում է կազմակերպել բոլոր երկրների ժամուլի միութիւն միջազգային իրաւարարութեան գաղափարի տարածման եւ իրագործման համար. այդ առաջարկութեան քննութիւնը յետաձգվում է հետեւեալ նիստին։

Նախագահ Ֆալլիէրի ճառը եւ բօէրների պատգամաւորների մասին կայացրված վճիռը ենթարկվեցին խիստ յարձակումների Պարիզի ժամուլի կողմից։ Բացի կառավարութեան բաբեկամ «Temps» եւ «Figaro» լրագիրներից, որոնք քարոզում են այն միտքը, թէ քաղաքական ներկայ պայմաններում, անկարելի էր այլապէս վարվել, մամուլի մնացած օրգանները դրեթէ միաբերան պախարակում են այդ վճիռը։

(Կը շարունակվի)

ական գործադիր կոմիտէները, որոնք վարում են տնտեսական գործերը եւ ծախսերը այդ նահանգների եւ գաւառների համայնքներում։

—

Ռուս գրականագէտների միութեան վարչութիւնը այս տարվայ գարնանը երկրորդ անգամ միջնորդութիւն էր յարուցել կառավարութեան առաջ՝ թոյլատրութիւն խնդրելով ռուս գրականագէտների համաժողով հրաւիրելու։ Այժմ, ինչպէս հաղորդում է «Россія» լրագիրը, ռուս գրականագէտների միութեան խնդիրը երկրորդ անգամ մերժված է ներքին գործերի մինիստրութեան կողմից։

—

Ֆինանսների մինիստրութիւնը յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ մինիստրների խորհրդի այս տարվայ յունվարի 25-ին կայացած եւ Բարձրագոյն հաստատված վճռով որոշված է երկարացնել մինչեւ 1902 թիւը 1887 թի 25, 10 եւ 5 ռուբլիանոց եւ 1866-ի 100 ռուբլիանոց թղթադրամների փոխանակութեան ժամանակամիջոցը։

—

Պարիզում հրատարակվող «Le Bulletin Médical» թերթի № 71-ում տպված է բժիշկ Լորիս-Մելիքեանի մի յօդուածը «Ժանտախտի դէմ ժողով կռիւ կազմակերպութիւնը Ռուսաստանում» վերնագրով։

—

ՂԱԶԱԽԻՑ մեզ գրում են. «Գողութիւնները չարունակվում են։ Կորչում են մեծ քանակութեամբ տաւար ու ձիաներ։ Տանողներն այնքան յանդուգն են դարձել, որ օրը ցերեկով տարած ապրանքը կրկին վաճառում են տէրերի վրա, պատիրելով ոչ օքի չը գանգատվել, աւելի մեծ վնասների չենթարկվելու սպառնալիքով։ Ազգաբնակութիւնը անհամբեր սպասում է նոր նահանգապետին՝ իր ցաւը նրան յայտնելու համար»։

—

ՍԵՒ ՔԱՐ գիւղից (Ղազախի գաւառ) մեզ գրում են. «Մեր գիւղական գործերը, չնորհիւ մեր նոր տանուտէր Սարիբէկեանցի, կանոնաւոր հիմունքների վրա են դրվում։ Վստահ ենք, որ Սարիբէկեան իր սկսած եռանդով ու տոկունութեամբ էլ կը տանէ իր գործը եւ մի օրինակելի տանուտէր կը դառնայ մեր ամբողջ գաւառում»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Այժմ արդէն գաւառի զանազան գիւղերից ծախու ալիւր են բերում Նոր-Բայազէտի շուկան։ Այն գիւղացին, որ մի ամիս առաջ այլ եւ այլ ծանր պայմաններով կօպէկներ էր ճարում—մուրում մի պուդ ալիւր գնելու համար,—այժմ այդ նոյն գիւղացին ինքն է ծախում ոչ միայն պուդերով, այլ եւ բեռներով—սայլերով եւ շատ էժան, այն է 80—90 կօպէկ պուդը»։

—

ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆ գիւղից մեզ գրում են. «Սեպտեմբերն է արդէն—վարուցանի ժամանակը, բայց դեռ մեզանում կալսելը չէ վերջացել։ Դեռ ապրիլ ամսից անընդհատ տեղացող անձրեւները ոչ միայն փչացրին, ոչնչացրին մեր ցանքերն ու խոտերը, դժուարացնելով նրանց հաւելը, հնձելն ու հաւելը, այլ եւ ժամանակ չեն տալիս դոնէ եղածն ամբարելու, ժողովելու։ Կալերի մօտ բարձրացող դէզերն արդէն կանաչել են եւ խեղճ գիւղացիները միանգամայն յուսաբեկ աչքով են նայում իրանց առաջ կանգնած չարաբաստիկ տարուն։ Ժամանակ չը կայ դոնէ սերմը կալսելու՝ եկող տարին մի քիչ տանելի դարձնելու համար, իսկ ստացածը Աստուած հատիկ համարէ։ Այսպիսի չարաչուք տարի 100 տարեկան ծերունիները չեն յիշում։ «Ոչինչ չը կայ» լսվում է շատերից, «կորած ենք», կրկնում են ամենքը եւ կին ու երեխայ քաղցից ազատելու համար շտապում են անասունները վաճառ հանել, գարու եւ կորեկի գին ձեռք բերել։ Այս ամենից յետոյ միակ մխիթարականը այն է, որ հացի գինը, չնորհիւ ուրիշ տեղերում եղած առատութեանը, չէ թանգանում. այսպէս, ցորենի թաղարը վաճառվում է 8 ռուբլով, իսկ գարին 3-ով»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Daily Chronicle» հետեւեալ կերպով է բնորոշում հարաւ-աֆրիկեան հանրապետութեան նախագահ Կրիւգերին. «Պօլ Կրիւգէր հեռացաւ Տրանսվալից, որպէս զի ապաստան գտնի պօրտուգալական նաւահանգիստում։ Դա, երեւի վախճանն է այն նշանաւոր դերի, որ նա կատարեց իր կեանքում։ Անկասկած, Կրիւգէր այն բոլոր անձերից ամենախոշորն է, որ մինչեւ այժմ արտադրել է հարաւային Աֆրիկան եւ պատմութիւնը չի մոռանայ նրան։ Կրիւգէր այն տիպիկական անձերից մէկն է, որոնց վերագրում են ուրիշ անձերի տիպիկական, խօսքերն եւ արարքները։ Շնորհիւ իր կամքի ոյժի եւ բնաւորութեան, չնորհիւ այն յամառութեան, որով նա ձգտում էր հասնելու իր նպատակին, չնորհիւ իր կտրուկ չիտակութեան, նա գլուխ էր կանգնել մի այնպիսի ցեղի, որ ինքը օժտված է այդ յատկութիւններով։ Որպէս նախագահ՝ նա «հին նահապետական ժամանակների» տիպիկական բօէր էր—քաջ, տոկուն, ֆիզիկական մեծ ոյժի տէր, պարզ եւ ջերմեռանդ։ Դա մի այնպիսի բնաւորութիւն է, որով ամենայն հաճութեամբ կը զբաղվի ապագայում մի որ եւ է կարլէյլ։ Նրա վրա կը նայեն մեր յետնորդները, որպէս մի հասարակ ցեղի անկախութեան եւ պարզութեան համար պատերազմողի վրա, որ անողոք կռիւ է մղում նորագոյն քաղաքակրթութեան, նրա փտիկակեցութեան եւ իշխանասիրութեան բարոյագիտութեան դէմ։ Նա կը նկարագրվի որպէս ներկայացուցիչ այն պայքարի, որ մղում է գիւղը քաղաքի դէմ, հինը նորի դէմ, պարզ կեանքը չքեղութեան եւ զեղխութեան դէմ։ Համաձայն ենք մենք, անգլիացիներս, այս նկարագրի հետ, թէ ոչ—այդ մի եւ նոյն է. մեզ թւում է, որ պատմութիւնը անշուշտ այս եւ ոչ այլ կերպ կը նկարագրէ նախագահ Կրիւգէրի պատկերը, որ 11 ամիս տեւող պատերազմից յետոյ, գտնվում է այժմ աքսորի մէջ, հեռու իր հայրենի երկրի սահմաններից, որի համար նա այնպէս յամառ, թէպէտ եւ ոչ ցանկալի ուղղութեամբ, աշխատել է»։

—Կ. Պոլսից հեռագրում են արտասահմանեան լրագիրներին, որ թիւրքական մայրաքաղաքի ոստիկանապետ Ֆայկ փաշան հեռացրած է պաշտօնից նրա համար, որ արգելք չէ դարձել երիտասարդ Թիւրքիայի կուսակցութեան ներկայացուցիչներին յիշատակագրեր տալ Կ. Պոլսի օտարերկրեայ դեսպաններին։ Բացի դրանից, իբր թէ, մի հայի տան մէջ դինամիտ է գտնված առանց ոստիկանութեան գիտութեան եւ մասնակցութեան։—Թիւրքական կառավարութիւնը քիչ ժամանակ առաջ կազմել է բոլոր երկիրներում ապրող մահմեդականների թահամարը։ Այդ հաշուից երեւում է, որ մահմեդականների ընդհանուր թիւը հասնում է 196,500,000-ի. սրանից եւրոպական Թիւրքիայում ապրում են—18 միլիոն, Փոքր-Ասիայում, Բելուջիստանում եւ Հնդկաստանում—99 միլիոն, Չինաստանում—20 միլիոն, հիւսիսային եւ հիւսիս-արեւելեան Աֆրիկայում—$36^1/_2$ միլիոն, աշխարհի միւս մասերում—23 միլիոն։

—Ալբանացիները եւ յոյները առաջարկել են ռումինական կառավարութեան կամաւորների զօրաբաժիններ կազմել այն դէպքում, եթէ պատերազմ ծագի Ռումինիայի եւ Բոլգարիայի մէջ։ Ռումինական զինուորական մինիստրը մերժել է այդ առաջարկը։ Տուլչայում, որտեղ մօտ օրերումս, թագաւորի ներկայութեամբ, պէտք է բացվի մի արձան, ի յիշատակ Դոբրուջայի կրկին միացման Ռումինիային, գտնված է, ինչպէս իմացել է «Frankfurter Zeitung», բոլգարական դաւադրութիւն, որի նպատակն էր միացնել Դոբրուջան Բոլգարիային։ Դատաստանական քննութեան ենթարկվածների մէջ են նաեւ Տուլչայի բոլգարական գիմնազիայի մի քանի ուսուցիչներ։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

9 սեպտեմբերի

ՐԻԳԱ։ Լիֆլանդիայի նահանգապետ գենեռալ Սուրովայեվ վախճանվեց։

ՊԵԿԻՆ։ 1300 հոգի ամերիկացիներից եւ անգլիացիներից կազմված մի զօրաբաժին՝ չորս թնդանօթով, գեներալ Վիլսոնի հրամանատարութեամբ, գնում է Սանդգեաօձեան, որպէս զի վերցնէ այնտեղի զինարանը եւ ցրվէ «Մեծբոունցքի» խմբերը։ Գեներալները խնդրեցին գերմանական աւագ իշխանաւորին զօրքեր ուղարկել դէպի արեւմուտք հալածելու բոունցքամարտներին։ Ֆրանսիացիները եւ եապօնացիները վարում են պատերազմական գործերը հիւսիս-արեւելքում։

ՏԵԱՆՋԻՆ։ 2600 գերմանական զինուորներ ճանապարհ ընկան Տեանձինից, որպէս զի Տակուի շրջակայքում միանան 4000 հոգուց բաղկացած մի զօրաբաժնի, որից 1500-ը գերմանացիներ են, իսկ մնացածները—ռուսներ։

Վաղը լուսաբացին Պէյտանի մարտկոցները կը ռմբակոծվեն։

ԼՕՐԵՆՑՕ-ՄԱՐԿԵԶԷ։ Բօէրները դիրք են բռնել այն բլուրների վրա, որոնք Կօմատիպօրտի մօտ են։ Նրանք 2 թնդանօթ եւ 10 միտրալիէզ ունեն եւ գտնվում են Պիկար եւ Գէցէ գեներալների հրամանատարութեան տակ։ Անգլիացիների գալուն սպասում են իւրաքանչիւր օր։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Զինական դեսպան Վուտինֆան արտաքին գործերի մինիստրութեանը հաղորդեց մի հեռագիր, ստացված հարաւային նահանգների փոխարքաներից, որով նրանք խնդրում են ամերիկական կառավարութիւնից հրամանագրել իր ներկայացուցիչներին Չինաստանում բանակցութիւններ սկսել։ Միանալով այդ խնդրին, Վուտինֆան ասում է, թէ կը կամենար համոզել Վաշինգտօնի կառավարութիւնը՝ բանակցութիւնների ձեռներէցութիւն յանձն առնել, յուսալով, որ միւս պետութիւններն եւս մի եւ նոյնը կանեն։ Վուչժանի եւ Նանկինի փոխարքաները յայտնում են, թէ պատրաստ են երաշխաւոր լինել իրերի խաղաղութեան եւ օտարերկրացիների ապահովութեան համար, եթէ օտարերկրեայ զօրքերի գալուստը դէպի Չինաստան կը դադարեցնվի։

ՎԻՆԲՈՒՐԳ։ Շտէյն նշանակել է դատաւոր Գերասիմովին Օրանժեան հանրապետութեան նախագահի պաշտօնակատար։

ՊԱՐԻԶ։ Կանտօնի մօտ, Սունտայեան շրջանում, անկարգութիւններ ծագեցին։ Մի քանի գիւղեր քանդված են. քարոզիչները աղատվեցին. փոխարքան անզօր է։ Հիւպատոսները զօրք են պահանջում։ «Avalanche» զինուորական նաւը կուղեկցէ զօրքերին։

ՊԵԿԻՆ։ Հրատարակված է կայսերական հրաման, որով յայտարարվում է, թէ կայսրը եւ այրի կայսրուհին հասել են Տայէնֆու։

Շանսիի նահանգապետը պատիրում է փող հաւաքել պալատ շինելու համար Խեանֆուում, որը պէտք է նոր մայրաքաղաք դառնայ։

ՇԱՆԳՀԱԵ։ «Գերտա» կէսօրին կը հասնի Վուղուն, որտեղից Վալդերզէէ կուղեւորվի դէպի Շանգհայ։ Նաւամատոյցի վրա շարվեցին գերմանական, ֆրանսիական, անգլիական եւ եապօնական պատուաւոր պահակները, նոյնպէս եւ անգլիական հեծեալ կցորդները։

ՏՕԿԻՕ։ Հեռագիրը Տակուից հաղորդում է, թէ ցզինխայ գրաված է դաշնակիցներից, բայց բոունցքամարտները կարողացան փախչել։ Դուլիւ քաղաքը ամբողջովին այրված է։

Սեպտեմբերի 7-ին Լի-Խունգ-Զանգ երկաթուղով հասաւ Տեանձին։ Հինգ օրից յետոյ նա կը շարունակէ իր ճանապարհը։

ՊԵԿԻՆ։ Ռուս, գերմանական եւ ֆրանսիական միացեալ զօրքերը սեպտեմբերի 7-ին առան Պէյտանի մարտկոցները։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Զաֆֆի հեռագրում է Պեկինից սեպտեմբերի 6-ին, թէ Վիլսոնի արշաւախումբը վերադարձաւ այնտեղ, առանց որ եւ է կորուստի նպատակին հասնելուց յետոյ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Մինիստրական խորհուրդի այսօրվայ նիստից յետոյ՝ պաշտօնական շրջաններում լուր տարածվեց, թէ կառավարութիւնը չինական հարցում կանգ է առել մի վճռի վրա, որը իսկոյն կը հրատարակվի, հէնց որ հաղորդվի պետութիւններին։ Յայտնի է, որ կազմված են երեք յայտագրեր, որոնք քննում են ռուսական եւ գերմանական առաջարկութիւնները ու վերաբերում են չինական պահանջներին, եւ որ կօնդեր դեսպանին լիազորութիւն կը տրվի բանակցութիւններ վարել ցինի հետ։

ՀՕՆԳԿՕՆԳ։ Կանտօնից ստացված տեղեկութիւններին նայելով՝ Սամչուիի շրջանում քրիստոնեաների դէմ ուղղված թշնական գործողութիւնների դէպքեր պատահեցին։

ՇԱՆԳՀԱԵ։ Ժամի 5-ին կոմս Վալդերզէէ հասաւ եւ մուտք գործեց Շանգհայ տեղական ազգաբնակութեան ցնծալից մասնակցութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ծովապետ Ալէքսեեվի հեռագիրը. «Սեպտեմբերի 7-ին իմ ղեկավարութեամբ եւ Շտակէլբերգ ու Ցերպիցկի գեներալների անմիջական հրամանատարութեամբ՝ մեր, գերմանական եւ ֆրանսիական զօրքերը ցամաքի կողմից առան Պէյտանի ամրութիւնները։ Ցարձակվածը մասնակցում էին 60 հոգի մեր ծովային զինուորներից, որոնք գնում էին զօրքի առաջից։ Ընդհանուր կորուստը—մօտ 30 նախաձիգներ»։

ՏԱԿՈՒ։ Ռուս կօզակները ուղեկցեցին Լի-Խունգ-Զանգին կայարանից մինչեւ պալատը, որ կառուցված է ժամանակին չինական կայսրի համար։

ՏԱԿՈՒ։ Լի-Խունգ-Զանգ հասաւ այսօր Տակու եւ ընդունվեց ոչ առանձին շուքով. միայն ռուս եւ եապօնացի օֆիցերները գնացին նրան այցելելու։ Լի-Խունգ-Զանգ արտակարգ գնացքով ուղեւորվում է Տեանձին։

ՊՐԵՏՕՐԻԱ։ Բօերտս վերադարձաւ Պրետորիա. նրա ուղեւորութեան ժամանակը դէպի Անգլիա անորոշ է։

ՊԵԿԻՆ։ Բրիտանական զօրքերը նուաղել են մինչ այն աստիճան, որ պատժողական արշաւախմբի համար, որոնց նպատակն է դուրս քշել բոունցքամարտներին տաճարներից, կարող են գործ ածվել 400 հետեւակներ եւ 50 հեծեալներ. միայն այս պատճառով արշաւանքը յետաձգված է։

Այժմ յայտնի դարձած մանրամասնութիւնները անգլիական, ամերիկական եւ ֆրանսիական քարոզիչների եւ նրանց կանանց ու երեխաների կոտորածի մասին Շանսիի նահանգում զարհուրանք են ազդում մարդու վրա։ Երբ այդ նահանգի նահանգապետ Նշանակվեց Իւէ-խօվէն, անգլիական կառավարութիւնը չը բողոքեց։ Քարոզիչների ամբողջ աշխատանքը Պեկինի եւ Դեղին գետի միջեւ գտնված շրջաններում ոչնչացված է։

ՊԵԿԻՆ։ Այսօր առաւօտեան անգլիական եւ ամերիկական զօրքերը առան Պէյտաչժօու։

ՊԱՐԻԶ. Համայնական պետերի բանկէտի ժամանակ, երբ Ալժիրի համայնական պետ Ռէժիս ողջունում էր հանրապետութիւնը Ալժիրի կողմից, համակրական եւ թշնամական ցոյցերը պատճառ դարձան վիրաւորական խօսքերի փոխանակութեան։ Ոստիկանութիւնը դուրս բերեց Ռէժիսին։

ՊԱՐԻԶ։ Լուբէի ճառը համայնական պետերի բանկէտում յաճախ ընդհատվում էր ծափահարութիւններով։ Բանկէտը վերջացաւ բուռն համակրութեան ցոյցերով ի պատիւ նախագահի։ Բարձրագոչ աղաղակներ ուղեկցում էին Լուբէին մինչեւ Ելիսեան պալատը։

10 սեպտեմբերի

ԿԵՕԼՆ։ «Կեօլնի լրագիրը» գրում է. «Գերմանական առաջարկութիւնը չինական կոտորածների նախաձեռնողներին պետութիւնների ձեռքը յանձնելու եւ նրանց պատժելու վերաբերմամբ ոչ մի կապ չունի, ինչպէս մենք կը կամենայինք չեշտել, ուշադրութեան առնելով օտարերկրեայ լրագիրներից մէկի կարծիքը, վարձատրութեան հարցի հետ, այլ ուղղակի նպատակ ունի առաջն առնել ապագայ կոտորածների. նա առաջացել է չինական արքունիքին բացատրելու անհրաժեշտութիւնից, որ եթէ չինական կայսրուհին հրաժարվի մեղաւորներին յանձնելուց նրանց արժանի պատժին ենթարկելու համար, այդ դէպքում նա ինքը իր վրա կը վերցնէ կատարված յանցանքների պատասխանատուութիւնը»։

ՊԱՐԻԶ։ Դէլկասսէ ստացաւ Պիչօնի հեռագիրը, որի մէջ ասված է, թէ թղթակցութիւնները պօստով դանդաղ եւ անկանոն են տեղ հասնում։ Ռուս ինժեներները ուղղում են երկաթուղու գիծը Պեկինից դէպի Տեանձին, որ անհրաժեշտ է Պեկինին պաշար մատակարարելու համար։ Նա հաղորդում է երեք եղուիտների երկու իտալական եպիսկոպոսների, մի ֆրանսիացի ֆրանցիսկեան աբեղայի, եօթ եւրոպական կոյսերի եւ մի քանի բողոքական պատօրների սպանութեան մասին Պեչելիում։ Նա հաւատացնում է, որ նահանգապետը ստիպեց գլխատել նրանց իր ներկայութեամբ դատարանի չինութեան մէջ։

11 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրամանը ռուսաց Կայսերական միսսիայի, ռուս զօրաբաժնի եւ ռուսահպատակների դուրս գալու մասին Պեկինից, որ հաղորդված էր օգոստոսի 12-ի եւ 13-ի հեռագիրներով, ռուսաց դեսպանը ստացել է օգոստոսի 23-ին, իսկ ռուս զօրապետը օգոստոսի 24-ին, որովհետեւ հեռագրաթելը եւ հաղորդակցութեան ճանապարհները չինական մայրաքաղաքի հետ փչացած էին։ Դեսպան Գիրս եւ գեներալ Լենեւիչ իսկոյն միջոցներ ձեռք առան Բարձրագոյն հրամանը կատարելու համար։ Կայսերական դեսպանատան անդամներից մի քանիսը եւ ռուս զօրաբաժնի առաջին խմբերը արդէն դուրս եկան դէպի Տեանձին։

ՊԵԿԻՆ։ Ռուսական հետեւակների մի գունդ եւ մի թնդանօթախումբ դուրս եկան դէպի Տեանձին։

ՍՕՖԻԱ։ Սոֆիայի, Ֆիլիպպօպոլի եւ Սլիվնիցի դիվիզիաների զինուորները, որոնք վերջացրել են իրանց ծառայութեան ժամանակամիջոցը, արձակված են։

ՄԱԴՐԻԴ։ Մարշալ Մարտինեց-Կամպօս վախճանվեց։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Կառավարութիւնը վաղը կը հրատարակէ մի յայտագիր, որի մէջ յայտարարված է, թէ Միացեալ Նահանգների զինուորական ոյժը կը սահմանափակվի միայն զօրեղ պահապան գունդով դեսպանատան համար, որ երաշխաւորէ նրա ապահովութիւնը նոր անկարգութիւնների ծագելու դէպքում եւ կամ այն դէպքում, երբ դեսպանատունը տեղափոխվի Տեանձին կամ մի այլ քաղաք։ Մտադրութիւն չը կայ այլ եւս գործադրել զօրքերը յարաբերութեան մէջ։

ձակողական գործողութիւնների համար, ուստի եւ ենթարկելու նրանց Վալդերզէէի հրամանատարութեանը այդ նպատակով։ Զօրքերի թիւը կրճատելու հրամանը դեռ եւս չէ հրատարակված, բայց կը հրատարակվի շուտով։

ԱԹԷՆՔ։ Պրինց Գէօրգ եկաւ Կրետէ կղզուց։ Նրա գալու բոպէին՝ մի պաշտօնաթող օֆիցեր, ըստ երեւոյթին խելագար, բռնեց այն կառքի երասաններից, որտեղ նստած էր պրինցը, ուրիշ պրինցների հետ միասին։ Այդ մարդը իսկոյն ձերբակալվեց. նրա մօտ գտնված է մի ատրճանակ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ինչպէս հաղորդում է ծովային մինիստրութիւնը, ամերիկական ծովային զօրքերի թիւը Չինաստանում, եթէ հանգամանքները թոյլ տան, նշանաւոր չափով կը կրճատվի, իսկ ծովային ոյժերը ասիական ջրերում ժամանակով կաւելացնվեն։ Չինաստանում եւ Ֆիլիպպեան կղզիներում ամերիկական շտաբը պաշտպանելու համար նշանակված են «Աննապոլի», «Վիկսբուրգ», «Վելլինգտոն» եւ «Դօրթէա» զինւորական մակոյկները. «Կենտուկի» զրահակիրը նոյնպէս ուղարկված է չինական ջրերը, իսկ «Ալբանի» շրջանաւը—դէպի Մանիլա։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Մինիստրութիւնը հրատարակել է Գերմանիային եւ Չինաստանին ուղղված յայտագրերն այն դիրքի վերաբերմամբ, որ կը բռնեն Միացեալ-Նահանգները։ Գերմանիային տուած պատասխանի մէջ ասված է, թէ բռնութիւնների նախաձեռնողների պատիժը, ի հարկէ, էական է ճանաչվում նրանց կրկնութիւնից խուսափելու համար, բայց այստեղ, այսուամենայնիւ, այն կարծիքին են, որ ոչ մի պատժական միջոց այնքան ազդեցութիւն չի ունենայ, որքան այն պատիժները, որ կը նշանակվեն կայսերական հրամանով։ Այստեղ ենթադրում են, որ արդարացի կը լինէր Չինաստանին միջոց տալ այս ճանապարհով վերականգնել իր պատիւը։ Ամերիկական կառավարութիւնը տրամադիր է նայելու պատիժների էութեան վրա, որպէս մի պայմանի, որ պէտք է քննութեան ենթարկվի հարցի վերջնական լուծման ժամանակ։ Չինաստանին տուած պատասխանի մէջ Լի-Խունգ-Զանգ եւ պրինց Ցին ընդունվում են, իբրեւ լիազօրներ։ Կօնչերին թոյլատրութիւն կը տրվի յարաբերութիւններ սկսել նրանց հետ։ Ցայտագրերը կարճ են եւ ուշադրութեան առնելով նրանց նշանակութիւնը՝ Գերմանիային տուած պատասխանը կազմված է զգոյշ ոճով, կարծես մերժումը մեղմացնելու համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ.

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կար ու ձեւի
ԴՊՐՈՑ
ՕՐ. ՆԱՏԱԼԻԱ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ

Աշակերտուհիների ընդունելութիւնը ամենայն օր է։ Պարապում են երկու նոր տեսակ սեթօդով։ Հասցէն. Թիֆլիս, Մողնու եկեղեցու հանդէպ. № 13. 6—6

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արհեստանոցում ընդունելութիւնը սկսվել է օգոստոսի 27-ից։ Արհեստանոցին կից բացվում է եւ լուացարան, որտեղ ցանկացողները կարող են սովորել հարթուկել եւ օսլայել սպիտակեղէն եւ զանազան նուրբ գործուածքներ։ Լուացարանում ընդունելութիւնը տեղի կունենայ նոյնպէս օգոստոսի 27-ից։ 6—10

Առամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների
ԲԺԻՇԿ ՆԻԿ. ԿԱՃԿԱՃԵԱՆ
ընդունում է հիւանդներ առաւ. 10—2 ժ. եւ երեկ, 5—7 ժ.։ Երեւանեան հրապարակ. տ. Խաչատրեանի. Ռոիսովъ-ի լուսանկարչական գործարանի տակը։ Эриванская площадь, домъ Харазова. (Ե. Հ. Չ. 8—25

Въ непродолжительномъ времени поступятъ въ продажу новыя книги, соч. И. Я. Бронъ-фонъ-Бреннеръ
1] Курсъ коммерческой ариѳметики, 2-е изданіе.
2] Самоучитель двойной бухгалтеріи и
3] Руководство по составленію отчетовъ.
Въ виду большихъ требованій и ограниченнаго количества экземпляровъ, принимается заранѣе, до выхода, подписка у автора. Тифлисъ. Михайловская, 71. 11—20

Կարա-Մուրզան
խնդրում է խմբին ժողովվել իր մօտ չորեքշաբթի օր, ամսիս 13-ին, երեկոյեան ժամը 6-ին։ Ընդունվում են նոր ձայներ եւս։
Мухранская ул., д. Мухранскаго, № 1։ 1—2

Շուտով լոյս կը տեսնեն
բոլորովին նոր եւ աւելի հարուստ բովանդակութեամբ
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1901 Թ.
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ (Տիրակ) ՕՐԱՑՈՒՑՈՒՆԵՐԸ 2—3

Մի օրիորդ, որ աւարտել է Մոսկվայի գիմնազիան եւ մանաւանդ ուսումնասիրել է ֆրանսերէն լեզուն թէ տեսականապէս եւ թէ գործնականապէս, ցանկանում է մասնաւոր դասեր ունենալ։ Ցանկացողները կարող են տեսնել ժամը 12—2-ը։ Бебудовская [Садовая], д. Лисицева. кв. Хачатуровой. (Հ. Չ. Չ.) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ նրա դիւանատան մէջ այս տարվայ սեպտեմբերի 12-ին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Թիֆլիսի առաջին քաղաքամասում գտնվող Կօբիյսկա փողոցը ասֆալտվելու քարայատակելու աշխատանքները, 123,01 պագ.՝ սաժ. երկարութեամբ եւ 1087 ր. 40 կ. գումարի։
Ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 3—3

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՏՆԱՑԻՆ
ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ
Մերվ գնալու համար, 300 բուբլի ռոճիկ, ճանապարհածախս, ուտելիք եւ բնակարան։ Պայմանների մասին դիմել՝ Լօրիս-Մելիքեան փողոց, № 11, Գ. Գալստեանցին։ 4—4

ԾԱԽՎՈՒՄ Է
Երկու յարկանի քարաշէն տուն՝ 196 քառ. սաժէն գետնով, որ պատկանում էր հանգուցեալ Յովսէփ Արտեմիի Ամիրովին եւ գտնվում է Թիֆլիսում, Սօլոլակում, Լերմօնտովսկայա (Նագօրնայա) եւ Բոիշչեվսկայա փողոցների անկիւնում, Փրիդօնովների տան կողքին։ Պայմանների մասին կարելի է իմանալ դեղագործական ապրանքների առեւտրի Կովկասեան ընկերութեան գրասենեակում, որ գտնվում է Տէատրալնայա փողոցի վրա, սեփական տան մէջ։ 4—4

Ընդունվում են **ՆԱԽԼԵԲՆԻԿԸ**-ներ փոքրահասակ մի բարեկիրթ հայ ընտանիքում՝ ձեռնտու պայմաններով։ Տունը գտնվում է՝ աշակերտների համար շատ յարմարաւոր փողոցում։ «Коммерческое училище»-ին կից՝ Екатерининская ул., № 2, երրորդ դուռը։ (Ե. Ռ.) 4—4

Բժիշկ Գ. Մեհրաբեան
վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ առամների հիւանդութիւնների բժշկութիւնը։ Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելիամինեան փող. տ. Քարտաշեանի, № 4. [Вельяминовская ул. № 4, домъ Карташянъ]. 6—25

12—32 (Ե.)

ՄԻ ՈՒՍՈՒՑՉԻ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
ընդունում են հասոյթաւոր գիշերօթիկ աշակերտներ (пансіонерами) կրկնութեամբ, առեւտրական եւ այլ միջնակարգ դպրոցների համար։ Հասցէն՝ Графская улица, № 10, домъ Эліозова. 6—6

ԴՊՐՈՑ
ԵՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(ԾՆՆԴ. ՑՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ)

Ընդունվում են տղայք եւ օրիորդներ եւ պատրաստվում գիմնազիօն, բէալական, վաճառականական եւ այլ միջնակարգ դպրոցներ մտնելու համար։ Ընդունելութիւնը օգոստոսի 22-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից։
Մանկական պարտիզում ընդունվում են 4 տարեկանից։
Садовая [Бебутовская], домъ Шадинова, № 38. 8—10

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Տեղափոխվեց նոր բնակարան—Նիկոլաեվսկայա փողոց № 46. (Николаевская ул. № 46)։ (Հ. ուր. շ.) 3—5

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ դասընթացքի XI շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբրաչխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։
Բ.) Առեւտրական թուաբանութիւն։
Գ.) Առեւտրական նամակագրութիւն։
Դ.) Գեղագրութիւն և ամենավաղ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1900 թվի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ (Ե. Հ. Չ) 21—30

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Լերմօնտովսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, եւ ունեն օրինաւոր ատեստատներ։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի
Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովհանօվների բանկային գրասենեակում եւ կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (Ե) 10—12

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ
ՈՒՆԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆ, ՈՐՈՆՑ ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ԵՒ ՐԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՆ։
Ընդունում է եւ պատրաստում աշակերտներ գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադետների կօրպուսի մինչեւ հինգերորդ դասարան, նոյնպէս առեւտրական, երկրաչափական եւ այլ ուսումնարանների համար։
Առաջին բաժանմունքում երեխաներ ընդունվում են առանց քննութեան։
Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսում ստացած հմուտ մասնագէտ մանկավարժներ։
Հասցէն՝ Թիֆլիս, Գանձվսկայա, № 11 (երրորդ գիմնազիայի մօտ)։ 3—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 13/25 սեպտեմբերի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին աչից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՑԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. Չ.) 11—20

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են պետական դպրոցների համար կազմած հայոց կրօնի դասագրքեր՝ Եղնիկ ա. ք. Երզնկեանի աշխատասիրութեամբ.
I. Առաջին գրքոյկ, պատրաստականների համար. ,,ԱՂՕԹՔՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ և ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ,,։ Գ. տպագր.
Գինը 20 կոպէկ։
II. Երկրորդ գրքոյկ, Առաջին դասարանի համար. ,,ՀԻՆ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ,,։ (Նոր հրատարակութիւն)։ Գինը 30 կ.։ (Ե. Հ. Չ.) 7—10

Дозволено цензурою, Тифлисъ. 11 Сентября 1900 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.